Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 531 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՄՈՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	Աջակցել Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն հաճախող ուսանողներին և կենտրոնի շրջանավարտներին՝ զարգացնել իրենց գիտելիքները լուսանկարչության ոլորտում՝ տալով նրանց ֆինանսական հնարավորություն մասնակցելու կրթական ծրագրի արտերկրում և ձեռք բերել իրենց նախընտրած սարքավորումները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Թումո բարեգործական հիմնադրամ (TUMO FOUNDATION, address: 5423 Willow Wood Ln, Dallas, Tx 75252-2656, US)
4.	Ծրագիրը կատարողը	Սիմոնյան կրթական հիմնադրամ (քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	11,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Նշված ծրագրի համար ընտրված Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի ուսանողները և շրջանավարտները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2025 թվականի հուլիսի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) արտերկրում լուսանկարչության ոլորտում կրթություն ստանալու համար հայտարարված մրցույթի արդյունքում առաջին տեղը զբաղեցրած հաղթողին ֆինանսավորել կրթություն (կրթական ծրագրի վարձի վճարում, կացության և կեցության ծախսերի ապահովում, ինքնաթիռի տոմս) 4,000,000 դրամի չափով, որը նախատեսվում է իրականացնել 2024 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում. 2) մրցույթի հաղթող ճանաչված երկրորդ, երրորդ և չորրորդ տեղեր զբաղեցրած ուսանողների համար ձեռք է բերվելու լուսանկարչական սարքավորումներ՝ 7,000,000 դրամի չափով, որը նախատեսվում է իրականացնել 2024 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) լուսանկարչական սարքավորումների ներմուծում և տրամադրում շահառուներին՝ 7,000,000 դրամի չափով. 2) կրթական ծրագրի վարձի վճարում՝ 3,200,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չեն նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգոր-ծական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

30.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ